ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 հունվարի 2016 թվականի N 2 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015թ. դեկտեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնքին գույք նվիրաբերելու մասին>> N 172-Ա որոշումը, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Մեղրի քաղաքային համայնքին նվիրաբերած, Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Մ. Օհանջանյան N 92 հասցեում գտնվող՝ 20181.6 հազար ՀՀ դրամ արժեքով, 1788.4 քառ. մետր ընդհանուր մակերեսով, <<Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից չշահագործվող նախկին շենքի ու շինությունների և դրանց սպասարկման ու օգտագործման համար առանձնացված 0.844 հեկտար մակերեսով, 1053.2 դրամ կադաստրային արժեքով հողամասի հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ասրյան Աշոտ -- աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

Ավետիսյան Ռազմիկ -աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

Ավետիսյան Համլետ - աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ,

Թունյան Ժիրայր - աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Վարդանյան Լուսինե << Մեղրի տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն՝ հանձնող,

Արզումանյան Արտավազդ - Մեղրի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ ընդունող, /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովին՝ հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման::

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. հունվարի 13

Ք. Կապան